ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-23/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

28-ը ապրիլի 2016թ
ժամը 10^{30}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի տեխնիկական ապահովման վարչության պետ, գնդապետ Ս. Աբրահամյան,
գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ Ավիացիայի վարչության պետի ԻԱԾ գծով տեղակալ-գլխավոր ինժեներ, գնդապետ Վ. Բաբայան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌԷՊ, կապի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ա. Բոստանջյան,
ՀՀ ՊՆ ներքին աուդիտի վարչության աուդիտի հաշվետվությունների կատարման վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Խաչատրյան,
ՀՀ ՊՆ աշխատակազմի վերահսկիչ վարչության հատուկ հանձնարարությունների բաժնի ավագ սպա, մայոր Ա. Ղևոնդյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության վերլուծության և տեղեկատվության բաժանմունքի պետ, գնդապետ Ա. Հովսեփյան:

«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

1. Տեղեկություններ հայտ /գնային առաջարկ/ ներկայացրած և չներկայացրած մասնակիցների մասին.
2.«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հարցում պարունակող հայտերի կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հարցման պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին
4.Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին:
5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **«Թռիչքավայրէջքային ուղու ճաքերի վերանորոգման»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Դառես» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

2 .«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հարցում պարունակող էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի

հարցման պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով /հարցումով/ պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը առկա են:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են **«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-23/1»** ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով /հարցումով/ սահմանված պայմաններին (պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 1:

(հանձնաժողովի անդամ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության վերլուծության և տեղեկատվության բաժանմունքի պետ, գնդապետ Ա. Հովսեփյանի ներկայացրած հատուկ կարծիքը կցվում է արձանագրությանը)

3. <u>Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին</u>

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակից.

Հ/Հ	Գնման առարկան	Հ/մ	Նախահաշվային գին, ՀՀ դրամ	Քանակը	«Դառես » ՍՊԸ	1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ
1	Թռիչքավայրէջքային ուղու ճաքերի վերանորոգում	գծամետր	1850	5405	1828	«Դառես » ՍՊԸ

3.2 Մասնակցի գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Մասնակցի հետ բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

4.1 **27.05.2016թ.** «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց <Դառես> ՍՊԸ-ն::

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերի 7.5 կետով նախատեսված փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ (եթե առկա է) զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 1:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Գնահատող (ԳԱՊ)	Ս. Աբրահամյան
Գնահատող	Ա.Բոստանջյան
Գնահատող	Վ.Բաբայան
Գնահատող	Ա.Ղևոնդյան
Գնահատող	Ա.Հովսեփյան
Գնահատող	Ա. Խաչատրյան
Գնումները համակարգող՝	Տ. Աբրահամյան

«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-23/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՉՆԵՐԱՌՎԱԾ ԿԱՐԾԻՔ

(ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ)

Հանդիսանալով «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամ՝ «Դեմ» եմ քվեարկել հայտերի բացման նիստի արձանագրության 2-րդ կետի վերաբերյալ, որի շուրջ ունեմ այլ՝ հատուկ կարծիք, մասնավորապես. ըստ ընթացակարգին մասնակից «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տվյալների՝ վերջինս մրցույթին մասնակցում է «Էմ Դի Էյջ» ՍՊԸ-ի հետ՝ համատեղ գործունեության (կոնսորցիումի) միջոցով և ներկայացրել է համապատասխան պայմանագիր, ինչպես նաև տվյալ պայամանգրից բխող յուրաքանչյուր մասնակցի՝ իր մասով առաջարկվող որակավորման չափանիշների առկայությունը հավաստող փաստաթղթերը:

Մասնավորապես՝ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 35-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանվում է, որ «մասնակիցը կարող է գնման ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

ա. հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիրը,

բ. հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի ***սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ հրավերով սահմանված որակավորման պահանջներին»*** , իսկ Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվում է.

1) մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

գ. գնային առաջարկ,

դ. հայտի ապահովում,

ե. հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը,

զ. ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը,

է. ապրանքների գնման դեպքում, եթե առաջարկվում է մատակարարել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք, ապա իր կողմից հաստատված հայտարարություն դրա վերաբերյալ:

Այսինքն, Կարգի մեկնաբանությունից ստացվում է, որ կոնսորցիումի յուրաքանչյուր անդամ պետք է բավարարի 35-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներին:

Իսկ մասնակցի կողմից ներկայացված հայտի ուսումնասիրությունից պարզվում է, որ մասնակիցներից յուրաքանչյուրը ներկայացնելու է միայն այն փաստաթղթերը, որոնք ներկայացնելու պարտավորությունը ստանձնել է համատեղ գործունեության պայմանագրով:

Ելնելով վերոնշվածից՝ կարծում եմ, որ «ԴԱՌԵԱ» ՍՊԸ-ի հայտը կարող է գնահատվել բավարար միայն այն դեպքում, երբ կոնսորցիումի բոլոր անդամների հայտով ներկայացված փաստաթղթերը կհամապատասխանեն Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներին:

ՀՀ ՊՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ

ԳՆԴԱՊԵՏ Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ